

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ  
И НАУКИ

**МИНИСТР**

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION  
AND SCIENCE

**MINISTER**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N 01.06.2/10247-14 04.09.2014թ.

**« Բարձրագույն ուսումնական  
հաստատությունների ղեկավարներին**

**Հարգելի ղեկավար**

Կարևորելով «Սահմանամերձ մի շարք համայնքների բնակիչների մասնագիտական կրթություն ստանալու նպատակով նրանց ընտանիքների սոցիալական բեռի որոշակի թեթևացման անհրաժեշտությունը, նախարարությունում քննարկվել է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող «Տավուշի և «Վայոց ձորի մարզերի որոշ համայնքների ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ խնդիրը:

Ելնելով խնդրի կարևորությունից և սահմանապահ գյուղերի համար հնարավոր արտոնությունների սահմանման «Կառավարության որդեգրած քաղաքականությունից, առաջարկում եմ.

«Տավուշի և «Վայոց ձորի մարզերի համապատասխանաբար Մովսես, Արծվաբերդ, Չինար, Այգեձոր, Պառավաքար, Վազաշեն, Վերին Կարմիրաղբյուր, Ներքին Կարմիրաղբյուր, Այգեպար և Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Բարձրունի, Սերս, Մարտիրոս համայնքների «Քուկերի 1-ին կուրսում սովորողների պարագայում, ուսման վարձերի մասնակի փոխհատուցման համար նախատեսված ժամկետներում, այլ կարգավիճակի (օրենսդրությամբ չնախատեսված սոցիալական խմբերի սովորողների դեպքում) ուսանողների համար 2014/2015 ուստարվա 2-րդ

Վիսամյակում կիրառել ուսման տարեկան վարձի առնվազն 30%-ի չափով զեղչ, իսկ 1-ին կիսամյակում՝ ուսման վարձի գանձումները կատարել ամսեկան կտրվածքով:

Երկրորդ և բարձր կուրսերի ուսանողների պարագայում՝ բուհերի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում, ուսման վարձերի մասնակի փոխհատուցման համար նախատեսված ժամկետներում, 2014/2015 ուստարվա 1-ին կիսամյակում կիրառել զեղչ տարեկան ուսման վարձի առնվազն 30%-ի չափով (օրենսդրությամբ չնախատեսված սոցիալական խմբերի սովորողների դեպքում):

Հարգանքով՝



Արմեն Աշոտյան